ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2020

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Սիրելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 45-50-րդ և 66-68-րդ առաջադրանքներում յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ դի՛ր X նշանը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ց:***

1) հանդիպակա-, ընչա-ք, պախուր-, կ-կվել
2) լվա-ք, տաղասա-, վար-կան, կաթնահուն-
3) ցն-ել, թյուրիմա-ություն, նվագա-ություն, ուր-
4) հինավուր-, մտա-ածին, տր-ակ, ճրագալույ-

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *մ:***

1) ս-բուկ, ջրա-բար, ա-բասիր, բա-բիռ
2) բա-բասանք, բա-բեր, հա-բույր, շա-բուտ
3) բա-բիշ, հա-բավ, զա-բյուղ, ճա-պրուկ
4) հա-պատրաստից, թա-բ, ճա-փա, ա-բրոս

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (բառաձևերի) վերջին վանկը *չի* շեշտվում:**

1) մանր, վեհանձն, քիմիայի
2) իհարկե, դառը, ցույց տալ
3) բուռն, որևէ, աստղեր
4) բաց անել, սառցե, գրեթե

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա:**

1) երգչախումբ, լճացում, ձնծաղիկ, դիպակ
2) այգեպան, ճվաճն, ընձուղտ, գործնական
3) կթվոր, տնական, սնամեջ, ակնդետ
4) ձեղնահարկ, արնագույն, դեռափթիթ, վշտաբեկ

5 **Ո՞ր շարքում բաց վանկ ունեցող բառ *չկա:***

1) անթրթիռ, մրմնջալ
2) արվարձան, գնացք
3) գերդաստան, երփներանգ
4) անդադրում, լուսամփոփ

6 **Ո՞ր տարբերակում է տառի կամ տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված:**

1) ՊՀՋ–866
2) ՇԽԵ–555
3) ՍՋՁԹ–2989
4) ՎՅԼԸ–3328

7 **Ընդգծվածներից ո՞րն է մյուս երեքին համանուն:**

1) Չին **անարգել** թռավ վերջին ձողապատնեշի վրայով:
2) Իշխանին **անարգել** ու անցնել անպատիժ նա չէր կարող:
3) Անցել էինք ամրոցի բոլոր պահակակետերն **անարգել**:
4) **Անարգել** կարող էր բացել ցանկացած փակ դուռ:

8 **Ո՞ր տարբերակում է *բոլոր կամուրջներն այրել* դարձվածքի իմաստը ճիշտ բացատրված:**

1) ճակատամարտում հաղթել
2) հետդարձի ճանապարհ չթողնել
3) միշտ հարձակվողի դերում լինել
4) հնազանդվել ինչ-որ մեկին

9 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:**

1) նզովք, կտավատ, անձավ
2) բամբակ, արձան, ճակատ
3) չմուշկ, համեմ, երազկոտ
4) դժխեմ, լցոն, դանակ

10 **Ո՞ր տարբերակում են ճիշտ համապատասխանեցված տրված բառերն իրենց բացատրություններին:**

ա. մուշկ
բ. կթղա
գ. կերոն
դ. վիհ
ե. խոյակ

1. մեծ խորությամբ երկարաձիգ փոս
2. քանդակազարդ սյունագլուխ
3. գինու թաս
4. բուրավետ յուղային նյութ

1) ա–3, բ–1, դ–4, ե–2
2) ա–4, բ–3, դ–1, ե–2
3) ա–4, գ–2, դ–3, ե–1
4) ա–3, բ–2, գ–4, ե–1

11 **Ո՞ր տարբերակի երկու բառերում էլ անկախ գործածություն *չունեցող* արմատներ կան:**

1) ապօրինի, պարզորոշ
2) հիասքանչ, ջրաներկ
3) հենասյուն, ընդունակ
4) կառապան, ծաղկման

12 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ կա:**

1) հոգեպարար, մեղապարտ, որդեգիր, սպառազեն
2) դասալիք, աղեկտուր, առևտուր, գետնատարած
3) տարեվճար, վիրաբույժ, ժպտադեմ, օրավուր
4) գործավար, բարեհունչ, փայտածուխ, հորդաբուխ

13 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *վա* հոլովման:**

1) ձմեռ, կեսօր, ոոպե, գիշեր
2) երեկ, գարուն, առավոտ, ժամ
3) շաբաթ, ժամանակ, վաղը, ցերեկ
4) տարի, վայրկյան, երբ, առաջ

14 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ:**

1) գծագիր, առանձնատուն, կաղնեփայտ, կողմնացույց
2) մորաքույր, հիմնապատ, տոնածառ, դուստր
3) նախագիծ, մեղրամոմ, պատճեն, մեծատառ
4) սառցաշերտ, ակնաբիբ, ընդդիմախոս, որմնասյուն

15 **Ո՞ր շարքում են ճիշտ նշված բոլոր այն բառերի համարները, որոնք գերադրական աստիճանով դրված ածականներ են.**

1. ամենագութ, 2. նորագույն, 3. ամենավատթար, 4. ամենաչոր, 5. ամենագնաց, 6. ամենօրոր, 7. ամենատես, 8. մանրագույն:

1) 1, 3, 4, 7
2) 1, 3, 5, 6, 7
3) 2, 4, 5, 7, 8
4) 2, 3, 4, 8

16 **Ո՞ր նախադասության մեջ դերբայի կամ ձևաբայի (կախյալ դերբայի) սխալ ձև *չկա:***

1) Դատարանը տուժվածից ցուցմունք վերցրեց կատարվածի վերաբերյալ:
2) Բոլորը նայեցին անզուսպ ծիծաղացող աղջկան:
3) Դեմքի թարմությունը պահպանելու համար մաշկը պետք է շարունակ խոնավացնել:
4) Ջրի ցայտերը դիպչում են ապակուն ու անմիջապես սառում:

17 **Ո՞ր շարքում են ճիշտ նշված բոլոր այն բառերի համարները, որոնք դերանուններ են.**

1. ոչ միայն, 2. ինչպես, 3. միմյանց, 4. այսօրինակ, 5. համայն, 6. երբևիցե, 7. քան, 8. ամենուր, 9. քանիերորդ:

1) 2, 3, 5, 6, 9
2) 1, 3, 5, 7, 8
3) 1, 2, 4, 7, 9
4) 2, 3, 5, 6, 8

18 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի):**

1) ելնել, հավատալ, մթագնել, կարկաչել
2) սահմանազատել, մեղանչել, փայլփլել, մկրտել
3) օժտել, կանգնել, հանգչել, շրջապատել
4) մատնել, ցատկոտել, կառչել, խոչընդոտել

19 **Ո՞ր նախադասության մեջ վերաբերական *չկա:***

1) Միայն մի ցավ էր նրան տանջում՝ որդու ամուսնությունն այլադավանի հետ:
2) Նա երևի մոռացել է, որ ժամադրված է:
3) Սի՞թե դժվար է ճիշտ ժամին ներկայանալ աշխատավայր:
4) Տարիներն ամենևին չէին խաթարել նրա գեղեցկությունը:

20 **Ո՞ր տարբերակում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ *չկա:***

Մայրաքաղաք գալով՝ մի օր հանդիպեցի ուսուցչիս, տեսա՝ որքան փոխվել էր նա. զզգզված մորուքը ճերմակել էր բամբակի պես, արագաշարժ ոտքերը թուլացել էին, վառվռուն աչքերը մարել էին մեռած աստղերի պես:

1) **գալով**–անկանոն բայ, անորոշ դերբայ, **մի**–քանակական թվական
2) **թուլացել էին**–***ա*** խոնարհում, բաղադրյալ ժամանակաձև, **որքան**–հարցական դերանուն
3) **զզգզված**–հարակատար դերբայ, կրավորական սեռ, **պես**–կապ, հետադրություն
4) **վառվռուն** –ածական, **ուսուցչիս**–դիմորոշ հոդով գոյական

21 **Ո՞ր նախադասության դիմաց է տեսակը սխալ նշված:**

1) Զինվել ենք ժամանակին: *(թերի, ընդարձակ)*
2) Ծաղիկները չտրորե՛լ: *(միակազմ, բայական անդեմ)*
3) Գործը գլուխ եկավ: *(երկկազմ, ընդարձակ)*
4) Սև գիշե՞ր, և հուշե՞ր, և խոհե՞ր անհամար… *(միակազմ, անվանական անդեմ)*

22 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

....., ամեն ինչ ներկայացնում էր առասպելական ասացողի երևակայությամբ:

1) Որևէ բան պատմելիս
2) Չնայած որևէ բան էր պատմում
3) Երբ որևէ բան էր պատմում
4) Որևէ բան պատմելու ժամանակ

23 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Արեգակը սպիտակ գույնի է, ուժեղ դեղնավուն երանգ ունի, բայց նրա լույսն իրականում բաղկացած է մի քանի գույներից. երբ տարրալուծում ենք նրա ճառագայթներից մեկը, տեսնում ենք, որ այն յոթ գույն ունի, ինչպես ծիածանն է լինում:



24 **Ո՞ր հատվածում բաղադրյալ ստորոգյալ *չկա:***

1) Ամեն ձորակը հոգսի մի ծալ է,
   Աղբյուրն արցունք է անզսպելի,
   Հովը հեքիաթի բարի հեծյալ է,
   Հողմը ասպետ է առասպելի:
2) Ինձ համար հերիք էր արդեն
   Ժպտալդ ու լալդ…
3) Ամպրոպից հետո աշխարհը և դու
   Հասկանալի եք լինում ավելի:
4) Նայի՛ր, դստրի՛կ, իշխանազուն
   Էս քաջերին լայնալանջ,
   Այժմ պիտի հանդես դուրս գան,
   Պայքար մտնեն քո առաջ…

25 **Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզ (դերբայական դարձվածով) նախադասության:**

Երկրորդ հարկի պատշգամբից ճառախոսում էր նա՝ այն մարդը, որ ճանապարհին հանդիպել էր մեզ:

1) Երկրորդ հարկի պատշգամբից ճառախոսում էր այն մարդը՝ ճանապարհին մեզ հանդիպածը:
2) Երկրորդ հարկի պատշգամբից ճառախոսում էր ճանապարհին մեզ հանդիպած մարդը:
3) Երկրորդ հարկի պատշգամբից ճառախոսում էր նա՝ ճանապարհին մեզ հանդիպած մարդը:
4) Երկրորդ հարկի պատշգամբից ճառախոսում էր նա՝ ճանապարհին մեզ հանդիպած այն մարդը:

26 **Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը հատկացուցիչ:**

1) **Մայրամուտի** ժամանակ հողմերը թույլ են լինում:
2) Ծերունին ասես **նավի** հետ տարուբերվում էր մտքերի ծովում:
3) Հիվանդն աչքերը բացեց և իր առջև տեսավ մի անծանոթ **երիտասարդի**:
4) Լուսաբացի թավշյա փեշով սրբեմ ծիրկաթինոտ ճակատն իմ **Սալվարդի**:

27 **Ո՞ր տարբերակում պատճառի պարագա *չկա:***

1) Ազնի՛վ եղիր ամեն ինչում: Ո՞վ է կյանքում սովից մեռել:
2) Գիշերային ահեղ փոթորկից նավը խորտակվել էր:
3) Էսպես տիկինը տվավ պատասխան, Անհուն ցասումից մռնչաց շահը…
4) Ինչո՞ւ իզուր հանգցնում ես Ջահել կրակն աչքերիդ:

28 **Ո՞ր նախադասության մեջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Ձորի բերանին կտրուկ զառիթափի տակ էր կանգնած եղբայրը գայլի համար լարված թակարդը ձեռքին:
2) Եղբոր գալն իմանալով ուրախությունից իրեն կորցրեց և շտապեց նախասրահ քանի տարի միմյանց չէին տեսել:
3) Գերանը չկոտրվեց կացնով ուժգին հարվածելուց հետո և սղոցով կտրեց:
4) Հայրը երբ էր հնձել լանջի այդ խոտհարքը տղան չէր կարողանում հիշել:

29 **Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Գաճաճ մոլորակները շատ փոքր չափեր ունեն: Կատարված դիտարկումների համաձայն՝ ամենախոշորներից մեկը՝ Ցերերան, իր զանգվածով 7500 անգամ փոքր է Երկրից:
2. Սրանով էլ բացատրվում է այն հանգամանքը, որ եթե Երկիր մոլորակի վրա մարդը կարող է ցատկել միջին հաշվով ընդամենը 50 սմ, ապա այդ աստղակերպի վրա՝ մինչև 30 մ: Այդպիսի թռիչքով Երկրի վրա հնարավոր կլիներ անցնել բարձր ծառերի վրայով:
3. Արևի շուրջը պտտվում են 8 խոշոր մոլորակներ, որոնցից 6-ը ունեն նաև իրենց արբանյակները: Բացի խոշոր մոլորակներից, կան նաև, այսպես կոչված, գաճաճ մոլորակներ՝ աստղակերպներ:
4. Գաճաճ մոլորակներից մի քանիսի՝ զանգվածով ավելի փոքրերի վրա ծանրության ուժը այնքան չնչին է, որ մարդը, հրվելով աստղակերպի մակերևույթից, կարող է նույնիսկ թռչել հեռանալ բաց տիեզերք, ինչը բացառվում է Երկրի պարագայում:

1) 4, 3, 2, 1
2) 3, 4, 1, 2
3) 3, 1, 2, 4
4) 4, 1, 2, 3

30 **Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված *չէ:***

Երազի նման գիշեր է այսօր,
Ու ձյուն է գալիս երազի նման,
Ճերմակ են դարձել դաշտերը բոլոր.
Մարմարե գիշեր՝ անեզր, անսահման:

1) համեմատություն
2) մակդիր
3) շրջադասություն
4) անձնավորում

31 **«Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) ո՞ր հերոսի խոսքն է.**

Մըսրա օջախ կանգնացուցես,
Հայու օջախ փչացուցես:

1) Սառյեի
2) Իսմիլ Խաթունի
3) Բաղդադի Խալիֆայի
4) Մըսրա Մելիքի

32 **Ո՞ր տողով է ավարտվում Մ. Մեծարենցի «Աքասիաներու շուքին տակ» բանաստեղծությունը:**

1) Ծաղիկներեն հուշիկ թերթեր կը թափե
2) Ի՜նչ հեշտին է մրթնշաղն այս սատափե
3) Ծաղիկներեն հովը թերթեր կը թափե
4) Նրվագն անոր կը հեծեծե հեշտական

33 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում «Աբու-Լալա Մահարի» պոեմի տողերի ճիշտ հաջորդականությանը:**

1. Ծիածանաթև հավքերը իրար գուրգուրում էին քնքուշ մրմունջով
2. Եվ լուսինն ինչպես ջեննեթի մատաղ փերիի կուրծքը՝ չքնաղ, լուսավառ
3. Նիրհ էին մտել ծաղկունքը բուրյան՝ աղամանդներով, շքեղ գինդերով
4. Մերթ ամաչելով պահվում էր ամպում և մերթ թրթռուն փայլում էր պայծառ

1) 1, 3, 2, 4
2) 2, 4, 3, 1
3) 1, 2, 4, 3
4) 2, 4, 1, 3

34 **Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում ի՞նչ արարողակարգով է դաշինք կնքվում Աթլի և Վարդան Մամիկոնյանի միջև՝ ընդդեմ Պարսկաստանի:**

1) Աթլը բերել է տալիս մի թաս ջուր, և ինքն ու Վարդանը խմում են նույն թասից, այնուհետև երկուսն էլ երդվում են Ավետարանի վրա:
2) Դաշինքի կնքման արարողության ժամանակ Աթլն իր մատանիով վավերացնում է ուխտը:
3) Աթլը և Վարդանը դաշույնով ծակում են իրենց բազուկները և ձեռքերը խաչելով՝ միմյանց խառնում արյունը:
4) Վարդանը բավական վարժ ստորագրում է դաշնագրի տակ, իսկ Աթլը, անգրագետ լինելով, դաշույնով անցք է բացում բթամատի վրա և արյամբ վավերացնում դաշինքը:

35 **Ո՞ր շարքում սփյուռքահայ գրող *չկա:***

1) Սիամանթո, Հակոբ Մնձուրի, Մուշեղ Գալշոյան
2) Դանիել Վարուժան, Համաստեղ, Պետրոս Դուրյան
3) Մուշեղ Իշխան, Վիլյամ Սարոյան, Ռազմիկ Դավոյան
4) Գրիգոր Զոհրապ, Նար-Դոս, Սիլվա Կապուտիկյան

36 **Երկտող տներից կազմված բանաստեղծությունը, որում տների երկրորդ տողերը հանգավորվում են առաջին տան տողերի հետ, կոչվում է՝**

1) սոնետ
2) հայրեն
3) տրիոլետ
4) գազել

37 **Ի՞նչ երազ է տեսնում Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի հերոս Թաթուլ իշխանը մատնության գիշերը:**

1) Թմկաբերդը հիմնահատակ քանդվել է:
2) Ցին ու ագռավ լցվել են Թմկաբերդ:
3) Վիշապ օձը փաթաթվել է բերդին:
4) Նաղիր շահը սպանում է իրեն՝ Թաթուլին:

38 **Ո՞ր պնդումը ճիշտ *չէ* Հ. Շիրազի «Թագադրում» բանաստեղծության վերաբերյալ:**

1) Բանաստեղծը չի ցանկանում, որ կյանքի հավերժական տոնի մեջ սողոսկի մահը:
2) Գարնան թագավոր թագադրվելով՝ բանաստեղծը ուզում է մարդուն տեսնել անմահ, հավերժի բախտով ցնծացող:
3) Հեղինակը պատկերում է բնության հզոր ուժերի առջև թույլ մարդու անզորությունը:
4) Բանաստեղծը սեփական երջանկությունը պայմանավորում է համայն մարդկության երջանիկ լինելու հանգամանքով:

39 **Տրված շարքերից քանիսի՞ բոլոր բառերում է բաց թողած միևնույն տառը:**

- դիցու-, տրտմաշու-, բազրի-, քողտի-
- խա-կանք, խարխա-ել, ջրար-ի, ող-անվագ
- սանդու-ք, ու-տափուշ, ե-կելի, փայծա-
- բիր-, թա-երգություն, աղո-ք, մթնոլոր-
- խառնիճաղան-, հաղար-, զի-ել, լա-վարդ

40 **Բառերից քանիսի՞ արմատին (արմատներից մեկին) կարող է միանալ *-ական* վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի.**

ճամփորդ, վարորդ, բարեհոգի, անցագիր, փախուստ, տարկետում, քառակուսի, տպատառ, ազնվազարմ:

41 **Տրված հատվածում քանի՞ կապ կա:**

Կռվում ընկածներին թաղելուց հետո հույները լքեցին Միսիան: Երբ նրանց նավերն արդեն ծովի վրա էին, մի սոսկալի փոթորիկ սկսվեց: Փոթորիկը թեթև տաշեղների նման դեսուդեն էր շպրտում հույների նավերը: Նրանք ճանապարհը կորցրին: Նավերը մեկը մյուսի հետևից հետ էին դառնում այն նավահանգիստը, որ վաղուց չէր, ինչ թողել էին՝ դեպի մեծ Տրոյա նավելու համար:

42 **Ընդգծվածներից քանի՞սը դերբայական դարձված *չեն* (նախադասությունները կետադրված չեն):**

- Գիշերվա կեսին **սարսափած քաղաքացիները** դուրս են թռչում տներից:
- **Նավթի հետ գործ ունենալը** պատճառ էր դարձել նրա մականվանը Մազութի Համո:
- Աչքը հառել էր **խանութի պատերից կախած** գույնզգույն հագուստներին ու սպասում էր գնորդի:
- Մանրավաճառները մինչև անգամ **շունչ քաշելու** ժամանակ չունեն:
- Սիրում է **հասարակական գործունեությամբ զբաղվել:**

43 **Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Մենք հպարտանում էինք նրանով և հարգում նրան, որովհետև երևելի հայ էր և մեր ուսուցիչն էր, բայց չէինք սիրում նրան. ոչ մի անգամ հայերեն չխոսեց և նույնիսկ չժպտաց մեզ հայերեն:
- Հետո, երբ կիսախուփ աչքերը բաց էր անում, հայացքը հառում էր ինչ-որ կետի, և մի տաք հոսանք թրթռալով՝ լցվում էր նրա էության մեջ ու մարմինը պատեպատ խփում:
- Անհրապույր կայարանում ստիպված էինք երկար սպասել հայկական գնացքին, որը պիտի կազմվեր հենց այդտեղ՝ կայարանում, բայց այդ գործն ուշանում էր, և ոչ ոքի հայտնի չէր շարժակազմը երբ պատրաստ կլինի:
- Իր տղաներից մեկին՝ Հայկին, ուղարկել էր այնտեղ՝ տեսնելու՝ ինչ է տեղի ունեցել, ինչով կարող են օգնել իրենք:

44 **Ե. Չարենցի ստեղծագործություններից քանիսի՞ վերնագիրն է սխալ նշված:**

- Ով քաղաքից էր հեռավոր, ուր մառախուղ էր անորոշ,
  Նա բերել էր թոքախտավոր սիրտը, որպես կարմիր դրոշ:
  «Ամբոխները խելագարված»
- Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
  Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան.
  Եվ թող տեսնեն ի՛մ աչքերի մեջ կախվածի,
  Իմ բո՛րբ երկիր, լուսապսակ քո ապագան:
  «Հարդագողի ճամփորդները»
- Նայում է ապա նա փոշոտ քարին
  Աղեղանման հոնքերի տակով…
  Գրված է վրան. «**Եղիշե Չարենց,**
  Բանաստեղծ, ծնված Մակու քաղաքում»:
  «Դեպի լյառը Մասիս»
- Գորշ, տաղտկալի ու խելագար երգ է կարծես այս կյանքը մի,
  Ինչ-որ մեկի սրտում բացված- վերք է կարծես այս կյանքը մի,
  Եվ ո՞ւմ համար- էլ ո՞ւմ համար կարոտակեզ երգե հիմի
  Սիրտս՝ լցված տարիների սեղմ արճիճով ու կապարով:
  «Տաղ անձնական»

45 **Նշել այն հատուկ անունների համարները, որոնց միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով.**

1. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ, 2. ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ, 3. ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, 4. ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ, 5. ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, 6. ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ, 7. ԵՂԻԱ ՄԱՐԳԱՐԵ, 8. ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ, 9. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՌԱՋԻՆ:

46 **Ո՞ր բառերն են կազմությամբ բարդ.**

1. ուղղամիտ, 2. փրկագին, 3. սնահավատ, 4. ապշահար, 5. բնօրրան, 6. սառցալեռ, 7. բերքառատ, 8. աստղաբույլ, 9. փափկասուն:

47 **Ո՞ր նախադասություններում ապակատար ձևաբայ (կախյալ դերբայ) կա:**

1. Ամառվա շոգ օրերին նա սիրում էր իջնել գետափ. իր ընկերների հետ լողալու էր գնում:
2. Իմ՝ սրճարան մտնելու պահին քանդակագործը նարդի էր խաղում. ինձ չնկատեց:
3. Տունդարձի ճանապարհին նա մտովի պատկերացրեց, թե ինչպիսի կարոտով էր գրկելու իր զավակներին:
4. Զվարթը թախիծով նայեց իրենց գյուղի կողմը և տխրեց, որ այլևս չի տեսնելու ծնողներին, խաղընկերներին:
5. Առավոտյան արթնանալով՝ դուրս եկա պարտեզ՝ սքանչանալու աշնան գույներով:

48 **Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության տարբերակներից որո՞նք են սխալ:**

Զինվորները դուրս են գալիս միահամուռ ուժերով գտած թաքստոցից, սպանում են պահակազորին, բացում երկաթից դարպասները:

1. **դուրս են գալիս**–բաղադրյալ ստորոգյալ
2. **գտած**–ձևի պարագա
3. **պահակազորին**–հանգման անուղղակի խնդիր
4. **երկաթից**–անջատման անուղղակի խնդիր
5. **միահամուռ**–որոշիչ
6. **դարպասները**–ուղիղ խնդիր

49 **Ա. Բակունցի պատմվածքների վերաբերյալ ո՞ր պնդումներում սխալ *չկա:***

1. Երիտասարդ սիրահարները բաժանվում են գյուղի կոպիտ բարքերի պատճառով: *(«Խոնարհ աղջիկը»)*
2. Սոնայի սերը վառ պահելու համար Դիլանը չի ամուսնանում: *(«Միրհավ»)*
3. Մինչ հնձվորի՝ տուն վերադառնալը երեք ձիավորներն արդեն հեռացել էին վրանից: *(«Ալպիական մանուշակ»)*
4. Պատմվածքի ավարտին Շարմաղ բիբին անտարբեր է դառնում եկեղեցու զանգերի ղողանջների նկատմամբ: *(«Սպիտակ ձին»)*
5. Դիլանը և Սոնան մանկության ընկերներ էին, և նրանց սերը ծնվել էր աննկատ: *(«Միրհավ»)*
6. Տարիներ անց Խոնարհը փնտրում և գտնում է իրենց գյուղի նախկին ուսուցչին: *(«Խոնարհ աղջիկը»)*

50 **Ո՞ր հատվածներն են արևմտահայերենով:**

1. Կելնեմ, կու գնամ, մանկտի՛ք, հաւասար բարով մնացէ՛ք….
2. Այլ, ո՞հ, ի՞նչ կ’ըսեմ… շանթահարե՛ զիս,
   Աստվա՛ծ, խոկն հըսկա փշրե՛ հյուլեիս…
3. Անցան դարեր. դեռ Տոմուտը հեծելով
   Գիշերները խանգարում է անվրդով
   Ավարայրի անուշ քունը…
4. Իրիկվան մեջ, գյուղին քով, Կը մրմնջե գուռն ուռիին տակ շքեղ:
5. Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ Ծաւալանայր յառաւօտուն:

Բ մակարդակ

51 **Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

Ես մտնում եմ որ–աքարերից(1) շինված եկեղեցու բաց դռնով, որի շա–անակագույն(2) փեղկի վրա կան նա–շեր(3)՝ ժամանակի ընթացքում տեղ-տեղ ջնջված: Կոր–նթարդ(4) կամարներով նեղ պատուհաններից արևը ներս է ընկել, և լույսի ժապավենի մեջ միլ–նավոր(5) փոշեհատիկներ են օր–րվում(6): Կես–րի(7) խիստ բար–(8) արևը տաքացրել է քարը, ու ես ավելի եմ սե–մվում(9) նրան, իսկ մր–յունները(10) իմ վրայով տանում են իրենց բեռները:

1) 1–ց, 5–իո, 7–օ, 10–ջ
2) 2–գ, 3–խ, 5–իո, 8–կ
3) 1–ձ, 2–գ, 6–օ, 10–ջ
4) 3–խ, 4–ը, 8–կ, 9–ղ

52 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում միասին:**

1) առ(ընթեր), նոր(խարբերդցի), շարվե(շարան), հազիվ(հազ)
2) հետ(այսու), ամսե(ամիս), ըստ(այնմ), ի(սպառ)
3) ափ(հանում), կիսով(չափ), հյուսիս(արևմտյան), խառն(ի)խուռն
4) ի(հաշիվ), վաթսուն(մեկ), գեր(ծանր), գլուխ(գործոց)

53 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

1) բիրտ–դաժան, տարտամ–անորոշ, անընտգյուտ–կատարյալ
2) հանգույց–թնջուկ, երկյուղել–ընկրկել, անջրպետ–պատնեշ
3) մտմտալ–խորհել, ոստայն–բնօրրան, շիվ–ընձյուղ
4) օգնել–աջակցել, բաղդատել–բաժանել, ճաղկել–խարազանել

54 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

1) Հանդիսավոր երեկոյին ներկա էին ազատամարտիկներ, բարձրաստիճան զինվորականներ, մի շարք օտարերկրացի հյուրեր և այլք:
2) Համաձայն ավանդության՝ նրա նախնիները ծագել են վիշապներից:
3) Գիտակցելով իր գործած վատ արարքը՝ նա մեղանչեց ընկերոջ առաջ՝ նրանից ներում հայցելով:
4) Հնագետները պեղելով կավից զատում են օրական մի ուլունք, ջնարակած մի կտոր ափսե, երբեմն մի կոպիտ արծաթադրամ:

55 **Ո՞ր նախադասության մեջ բայի բաղադրյալ ժամանակաձևով դրված ստորոգյալ կա:**

1) Երբ վրանի մոտ լսեց մոր բոբիկ ոտքերի ձայնը, զգեստի խշշոցը, տղան սիրտ առավ:
2) Կամսարյանը հրաժարվեց այդ խմիչքից՝ առարկելով, թե գինին դեղին գույնի է, ինչը շշի կեղտից կամ օղու հնությունից է գալիս:
3) Զգաց, որ պետք է շտապեր, արագ գործեր, բայց ապարդյուն:
4) Քո վազքի ընկերոջը ճանապարհի կեսին թողնելուց հետո մի՛ կարծիր, թե ահա այս զառիվերը կանցնես, քո վազքը կհեշտանա:

56 **Ո՞ր տարբերակում անկանոն բայ *չկա:***

1) Երբ կհոգնես, կգազազես աշխարհից,
Դարձի՛ր ինձ մոտ, վերադարձի՛ր դու նորից:
2) Ինձ թաղե՛ք, երբ տխուր մթնշաղն է իջնում,
Երբ լռում են օրվա աղմուկները զվարթ:
3) Եվ ես արթնացա խնդության ցավից.
Գիշերվա հովն էր լալիս դաշտերում:
4) Իմ գերեզմանին դուք չմոտենաք,
Թողե՛ք, որ հանգչի իմ սիրտը հոգնած:

57 **Ընդգծվածներից ո՞րն է շաղկապ (նախադասությունները կետադրված չեն):**

1) **Չնայած** սառնամանիքին մրցումները չէին դադարել:
2) Մեր երկրին **հենց** այդպիսի մտավորականներ են անհրաժեշտ:
3) **Մինչև** առուն ջուր գա գորտի աչքը դուրս կգա:
4) Ճակատագրական իրավիճակներում անշուշտ **այլ** է լինում մարդու վարքագիծը:

58 **Ո՞ր նախադասության մեջ միջոցի անուղղակի խնդիր կա:**

1) Ժայռերի ստվերոտ կողերը մամուռով են պատված. ջրերը թռչում են վերև, հասնում նրանց:
2) Նա գիտեր, որ անցյալ տարվա օրացույցով հունիսի տասնմեկը կիրակի էր:
3) Ես եկել եմ այն վերջնական եզրակացության, որ մարդիկ հիանում են իրենց չունեցած հատկություններով:
4) Ես մտա գրքերի աշխարհը նույն թափով և կրքով, ինչ թափով և կրքով Լևոնը մտել էր գործարար աշխարհ:

59 **Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

-Դու քո ոչ մի քայլի համար պատասխան չես տալիս,- վրդովված ասաց ինձ եղբայրս, ապա ավելացրեց.- այսուհետ չփորձես հույսդ ինձ վրա դնել:

1) Եղբայրս վրդովված ասաց ինձ, որ նա իր ոչ մի քայլի համար պատասխան չի տալիս, ապա ավելացրեց, որ այսուհետ չփորձի հույսը իր վրա դնել:
2) Եղբայրս վրդովված ինձ ասաց, որ ես իմ ոչ մի քայլի համար պատասխան չեմ տալիս, ապա ավելացրեց, որ այսուհետ չփորձեմ հույսս նրա վրա դնել:
3) Եղբայրս վրդովված ասաց ինձ, ապա ավելացրեց, որ ես իմ ոչ մի քայլի համար պատասխան չեմ տալիս. այսուհետ չփորձեմ հույսս իր վրա դնել:
4) Եղբայրս վրդովված ասաց ինձ, որ ես իմ ոչ մի քայլի համար պատասխան չեմ տալիս, ապա ավելացրեց, որ այսուհետ չփորձեմ հույսս իր վրա դնել:

60 **Ո՞ր տարբերակում ենթակա ստորադաս նախադասություն *չկա:***

1) Ինձ համար հաճելի էր, որ խաղալիս ինձ ընկերակցում էր Մարիան:
2) Առայժմ այն է հասկացել միայն, որ ինքը մեծ ու աններելի սխալ է գործել:
3) Աղջկա ուշադրությունը գրավեց այն, որ ես կտրուկ կանգ առա և առանց որևէ բան ասելու՝ դուրս եկա:
4) Հյումբաթի ձորից պարզ երևում էր, թե ինչպես գունավոր գորգերը հանեցին քարանձավներից և շալակով տարան:

61 **Ո՞ր հատվածը Վ. Տերյանի որ բանաստեղծությունից է:**

ա. Նայվածներով խորին, եկար, ներո՜ղ,
Եկար կրկին գերող, խորհրդավո՜ր.
Եկար հուշիկ, անչար ավաղներով,
Օրորներով ամենօրոր:
բ. Իջնում է նա հուշիկ, որպես իրիկուն,
Օղակելով լույս աստղերը մեկմեկու:
գ. Նորից ես մանուկ եմ այսօր,
Դրախտ է նորից իմ հոգում:
դ. Նվագով անուշ քանի՜ սիրեն
Կանչում էին ինձ և կախարդում,
Բայց սիրտս մաքուր, որպես ցորեն,
Պահեց անունդ վշտում արթուն:

1) «Կարծես թե դարձել եմ ես տուն»
2) «Որպես Լաերտի որդին»
3) «Ոսկեհանդերձ եկար»
4) «Fatum»

1) ա–3, բ–2, գ–1, դ–4
2) ա–1, բ–3, գ–4, դ–2
3) ա–3, բ–4, գ–1, դ–2
4) ա–1, բ–4, գ–2, դ–3

62 **Տրված հատվածը Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի ո՞ր հերոսին է վերաբերում:**

«Ուներ այնպիսի նայվածք մը, որուն եթե պ. Հ. Վարդովյան հանդիպեր յուր աչերով, կը հարցուներ այդ մարդուն. «Ի՞նչ ամսական կուզես՝ թատրոնիս մեջ ապուշի դեր կատարելու համար»:

1) բժշկին
2) Մանուկ աղային
3) Աբիսողոմ աղային
4) բանաստեղծին

63 **Բառազույգերից քանի՞սն են կազմված հականիշներից.**

առինքնել–վանել, մեծատուն–ընչազուրկ, ճապաղ–մերժելի, սակավապետ–անզուսպ, հակամետ–միտումնավոր, ծանծաղ–խորունկ, տարակարծիք–համատեղ, սինլքոր–վեհանձն:

64 **Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:**

- *Այդ միջավայրում նախանձի առարկա էր դառնում մերձավորին կոխկռտելով առաջ գնացողը:*
  Այդ միջավայրում նախանձի առարկա էր դառնում նա, ով մերձավորին կոխկռտելով առաջ էր գնում:
- *Էթնայի ստորոտում ապաստանած Կատանիա քաղաքը հայտնի է իր բնակիչների դյուրաբորբոք բնավորությամբ:*
  Էթնայի ստորոտում ապաստանած Կատանիա քաղաքը հայտնի է նրանով, որ իր բնակիչները դյուրաբորբոք բնավորություն ունեն:
- *Զարմանալին Ռաֆֆու անտարբեր լինելն էր արևելյան երաժշտության հանդեպ:*
  Զարմանալի էր, որ Ռաֆֆին անտարբեր էր արևելյան երաժշտության հանդեպ:
- *Այս գործիչը Հայաստանի արվեստի օրերի առիթով Մոսկվա այցելածների խմբում էր:*
  Այս գործիչը այն խմբում էր, որը Հայաստանի արվեստի օրերի առիթով Մոսկվա էր այցելել:

65 **Նախադասություններից քանիսո՞ւմ ներգործական սեռի բայ կա:**

- Գարնանը Արաքսը ելնում է իր ափերից՝ վարար ջրերով տիղմ կուտակելով լայն տափարակի վրա:
- Արևը մայր մտնելուն մոտ էր, ծովակի կողմից փչում էր զով քամի, իսկ եղանները բարձրանում ու համաչափ իջնում էին:
- Հազրոն առավ իր կնոջն ու աղջկան, անցավ լեռից լեռ, քարանձավից քարանձավ:
- Եղան բռնություններ, թշնամին ձորերով բարձրացավ մինչև նրանց խեղճ խրճիթները:
- Բոցը հասավ դեղնած արտերին, կրակը լափեց և՛ սերմ, և՛ սերմնացան:

66 **Նշել այն բառերի համարները, որոնցում ածանցի հնչյունափոխություն կա.**

1. ընչաքաղց, 2. միութենական, 3. սառցադաշտ, 4. խորհրդատու, 5. միջնակարգ, 6. վարչություն, 7. լրատվություն, 8. պատմաբան, 9. հայրենասեր:

67 **Ո՞ր նախադասություններում բուք պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1. Փոքրոգիներն ընդհանրապես քիթները դեպի երկինք են ցցում և կարծում այդպես կկարողանան երկինք մտնել:
2. Այդ տան դռնով ներս մտնողը վայելում էր Թումանյանի միշտ համերաշխ ընտանիքի սրտաբացությունն ու ջերմությունը վայելում տանտիրուհի Օլգայի պատրաստած համեղ կերակուրները:
3. Այստեղ կիսախարխուլ խրճիթ հիշեցնող գեղջկական այս խղճուկ եկեղեցում ինչպիսի սիրով ողջունեցի ես մի աղքատ գյուղացու երբ սարկավագի սրտաբուխ խոսքերը լսեցի:
4. Սարսափած ու գույնը գցած դուրս եկավ կենտրոնակայանից մի քանի օր լուր չկար հետախույզներից:
5. Կատակողները մի քիչ կկատակեն հասկացողները կհասկանան:

68 **Նշել այն մտքերի համարները, որոնք հակասում են տեքստի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

1943 թվականին, չունենալով ոչ սեփական կացարան, ոչ փող, Նյու Յորքի հյուրանոցներից մեկում իր մահկանացուն կնքեց մեծ ֆիզիկոս Տեսլան՝ էլեկտրատեխնիկայի պոետը: Նա կյանքից հեռացավ լուռ ու աննկատ:

Նրա անվան հետ բազմաթիվ լեգենդներ ու առասպելներ են կապված: Դեռ մանկության տարիներից իր ընդունակությունների խորհրդավորությամբ նա զարմացնում, անգամ վախեցնում էր իրեն շրջապատող մարդկանց: Մի անգամ նա մեծ դժվարությամբ կարողացավ տանը պահել իր հյուրերին, որոնք շտապում էին կայարան: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ գնացքն աղետի է ենթարկվել: Նա տեսնում էր մթության մեջ…

1884 թ. Տեսլան մեկնեց Ամերիկա՝ Թոմաս Էդիսոնի մոտ՝ աշխատելու: Նյու Յորք հասավ՝ գրպանում ունենալով 4 ցենտ և իր նախկին գործատուի կողմից Էդիսոնին հասցեագրված մի նամակ, որում գրված էր. «Ես ճանաչում եմ երկու մեծ մարդկանց, որոնցից մեկը Դուք եք, երկրորդը՝ այս երիտասարդը»… Սնանկացած գիտնականը անգամ հրաժարվեց Նոբելյան մրցանակից, որը տրվել էր իրեն և Էդիսոնին, և այն ոչ մեկին չշնորհվեց:

Տեսլան՝ 20-րդ դարի այդ ամենաառեղծվածային գիտնականներից մեկը, հավատացած էր, որ ինքն ընդունում է տիեզերքից ինչ-որ մեկի կողմից պարբերաբար հաղորդվող ազդանշաններ, որոնք մարդիկ ի վերջո կվերծանեն: Խորհելով այլմոլորակայինների հետ հաղորդակցվելու մասին՝ նա գրում է. «Հանուն պատմական այդ մեծ առաքելության, հանուն նրա, որ իրականանա այդ հրաշքը, ես իմ կյանքը կտայի»:

1. Տեսլայի կանխազգալու ունակությունը առաջին անգամ դրսևորվեց այն ժամանակ, երբ իր հյուրերին փրկեց աղետից:
2. Ըստ նամակագրի կարծիքի՝ Տեսլան իր ճանաչած երկու մեծություններից մեկն էր:
3. Տեսլան վստահ էր, որ տիեզերքից ազդանշաններ են հաղորդվում, որոնք, սակայն, կարոտ են վերծանման:
4. Տեսլան համոզված էր, որ այլմոլորակայինները պարբերաբար այցելում են Երկիր:
5. Տեսլան մեկնեց Ամերիկա՝ Էդիսոնի հետ Նոբելյան մրցանակաբաշխությանը մասնակցելու համար:

69 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Հոլովական և խոնարհման վերջավորությունները նախադասության մեջ կատարում են կապակցման միջոցի դեր:
2. Համաձայնությամբ կապակցվում են միայն ենթական և ստորոգյալը:
3. Բացահայտիչը և բացահայտյալը կապակցվում են խնդրառությամբ:
4. Մասնական բացահայտիչը հոլովով համաձայնում է բացահայտյալին, որոշիչ հոդ չի ընդունում:
5. Խնդրառությունը դրսևորվում է թե՛ համադասական, թե՛ ստորադասական կապակցություններում:
6. Եթե ենթական ունենում է մեկից բարձր թիվ ցույց տվող որոշիչ լրացում, ապա կարող է դրվել թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվով:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Մակբայները դառնում են բայական անդամի լրացում:
2. Մակբայները չեն կարող լինել կազմությամբ պարզ բառեր:
3. Կան մակբայներ, որոնք նաև կապեր են:
4. Ածականը կարող է ունենալ մակբայով արտահայտված լրացում:
5. Համապատասխան ցուցական դերանուններով կարող են փոխարինվել բոլոր տեսակի մակբայները:
6. ***-որեն, -բար, -ակի, -ական*** վերջածանցներով կազմվում են միայն մակբայներ: